ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԻ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԱՌԱՐԿԱ՝ Դասվար

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ա. Սարդարյան

ԽՄԲԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝ մ.գ.թ. Ա. Սարգսյան

ԻՋԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ……. 3
2. Գլուխ 1. Պետության դերը սովորողի իրավունքների ու ազատությունների պատվի ու արժանապատվության պաշտպանության գործում ……..... 5
3. Գլուխ 2. Դպրոցական բուլինգ …....…… 10
4. Գլուխ 3. Ուսուցչի դերը սովորողի իրավունքների ու ազատությունների պատվի ու արժանապատվության պաշտպանության գործում …...…..... 21
5. Գլուխ 4. Վիճակագրություն …….....……..... 24
6. Եզրակացություն 25
7. Գրականության ցանկ …….. 27

Ներածություն

Արժանապատվություն հասկացությունը դասավանդման ընթացքում սովորողների մեջ սերմանել խիստ կարևոր է: Նրանից բխում է սովորողների կողմից պատասխանատվության գիտակցում և ստանձնումը:

Թեմայի արդիականությունը:

Արժանապատվությունը մարդու իրավունքների հիմնարար հասկացություն է, բարձրագույն և առանցքային արժեք, մարդու անքակտելի և անօտարելի իրավունք, որը հատուկ է նրան ծնված օրից:

Անձի արժանապատվությունը այն հիմքն է, որի վրա կառուցված է մարդու իրավունքների համակարգը: Արժանապատվությունը սկզբունք է, որը ընկած է մարդու իրավունքների հիմքում և միևնույն ժամանակ պաշտպանվում է որպես իրավունք՝ առանձին և այլ իրավունքների համատեքստում: Մարդու իրավունքների հիմնարար սկզբունք լինելուց զատ՝ այն նաև փիլիսոփայական և բարոյագիտական հասկացություն է: Իբրև այդիպիսին այն ընկալվում է որպես մարդու հատուկ բարոյական վերաբերմունքը ինքն իր հանդեպ և նրա հանդեպ հասարակության վերաբերմունքը, որտեղ ընդունվում է անձնավորության արժեքը: Մի կողմից, մարդու՝ սեփական արժանապատավության գիտակցումը անձնավորության ինքնագիտակցման և ինքնավերահսկման ձևն է, նրա վրա է հիմնվում ինքն իր հանդեպ մարդու պահանջկոտությունը: Իր արժանապատվության հաստատումը և պաշտպանումը ենթադրում է նրան համապատասխանող բարոյական արարքների կատարում (կամ, ընդհակառակը, թույլ չի տալիս մարդուն վարվելու իր արժանապատվությունից ցածր): Այս իմաստով սեփական արժանապատվության ըմբռնումը, խղճի և պատվի հետ միասին, հանդիսանում է մարդու՝ ինքն իր առջև որպես պատասխանատվության գիտակցման եղանակներից մեկը: Մյուս կողմից, անձի արժանապատվությունը պահանջում է նաև մյուս մարդկանցից՝ հարգել անհատին, ճանաչել մարդու համապատասխան իրավունքներն ու հնարավորությունները, նրան ներկայացվող բարձր պահանջկոտությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է երեխաներին իրազեկել իրենց

իրավունքների և այդ իրավունքների իրականացման հնարավորությունների մասին. այդ դեպքում երեխաները կկարողանան պատշաճ իրացնել իրենց իրավունքները, չխախտել և պաշտպանել այլ երեխաների իրավունքները, ինչպես նաև լինել իրավագիտակից ու սեփական վարքագծի նկատմամբ պատասխանատու քաղաքացիներ: Այս գործում անչափ կարևոր է նաև ուսուցիչների մասնակցությունը, քանի որ երեխաների՝ որպես անհատականությունների կայացման գործում անգնահատելի է ուսուցչի դերը: Ուսուցիչը պետք է իրազեկումն իրականացնել ոչ միայն միջառարկայական կապերի ժամանակ, այլ նաև դասղեկական ժամերին:

Գլուխ 1. Պետության դերը սովորողի իրավունքների ու ազատությունների պատվի ու արժանապատվության պաշտպանության գործում

Պետությունները համաձայնել են, որ երեխաներն են յուրաքանչյուր հասարակության ու պետության ապագան, որ երեխան օժտված է իրավունքներով և որ իրենք՝ պետությունները, պարտավոր են պաշտպանել երեխայի իրավունքները: Իսկ երեխաների իրավունքները պաշտպանելու համար նախ և առաջ անհրաժեշտ է բարձրացնել երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: Յուրաքանչյուր ոք, առաջին հերթին՝ երեխաները, ծնողներն ու երեխաների հետ աշխատող մեծահասակներն ունեն երեխայի իրավունքներն ուսումնասիրելու կարիք: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան թե՛ երեխաներին և թե՛ մեծահասակներին հրաշալի հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու երեխայի իրավունքները: Կոնվենցիայի չորս ուղենիշային սկզբունքները «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի չորս հոդվածներ, որոնք հայտնի են որպես Կոնվենցիայի ուղենիշային սկզբունքներ, հատուկ ուշադրության են արժանացած: Այդ չորս սկզբունքները (հոդվածները) նպատակաուղղված են ապահովելու Կոնվենցիայով ճանաչված բոլոր իրավունքների լիակատար և արդյունավետ կիրառումը: Երեխաների համար հավասար հնարավորությունների ապահովումն ու նրանց իրավունքների պաշտպանությունը կախված է նրանից, թե ինչպես են ապահովվում Կոնվենցիայի այդ չորս հիմնաքարային սկզբունքները: Այդ չորս սկզբունքները լիովին նոր վերաբերմունք են ձևավորում երեխաների նկատմամբ՝ դարձնելով Կոնվենցիան էթիկական ու գաղափարական արժեքավոր հարթություն: Սկզբունքների հիմքում ընկած հիմնական գաղափարն այն է, որ ԵՐԵԽԱՆԵՐՆ ԱՆՀԱՏՆԵՐ են: Իսկ երեխաների խաղալու իրավունքի ամրագրումը կարծես հաստատում է մանկության արժեքը և օգնում չմոռանալ, որ այդ շրջանը կարևոր նախապատրաստական փուլ է յուրաքանչյուր մեծահասակի համար: 1. Առանց խտրականության Բոլոր երեխաներն օժտված են նույն իրավունքներով և երբեք չպետք է ենթարկվեն խտրականության: Երեխաներին հավասար հնարավորություններ տրամադրելու պարտավորությունը սահմանվում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածում.

1.«Մասնակից պետությունները հարգում և ապահովում են Կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները՝ իրենց իրավազորության ներքո գտնվող

յուրաքանչյուր երեխայի համար՝ առանց որևէ խտրականության, անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքից, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, առողջական վիճակից և ծննդից կամ այլ կարգավիճակից»:

2. Երեխայի լավագույն շահերը Երեխաների հետ կապված բոլոր գործողություններում առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին: Բոլոր չափահաս անձինք պետք է անեն այն, ինչը լավագույնն է երեխայի համար, որոշում ընդունելիս նրանք պետք է մտածեն, թե իրենց որոշումներն ինչպես կազդեն երեխայի վրա: Երեխայի շահերը բոլոր դեպքերում գերակա են մեծահասակների, օրինակ՝ ծնողների, ուսուցիչների, խնամակալների շահերի նկատմամբ: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1- ին մասը սահմանում է. «Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:

3. Կյանքի ու զարգացման իրավունք Երեխայի տնտեսական և սոցիալական իրավունքների հիմքում ընկած բանաձևը սահմանվում է երեխայի՝ կյանքի իրավունքն ամրագրող հոդվածում: Հոդվածը ոչ միայն խոսում է երեխայի ապրելու իրավունքի մասին, այլև սահմանում է նրա գոյատևման ու առողջ զարգանալու իրավունքը: 6-րդ հոդվածի 2-րդ մասում գրված է. «Մասնակից պետությունները հնարավոր առավելագույն չափով պետք է ապահովեն երեխայի գոյատևումը և առողջ զարգացումը»:

4. Լսված լինելու իրավունք Կոնվենցիայի մյուս՝ չափազանց կարևոր, սկզբունքը հարգանքն է երեխայի կարծիքի նկատմամբ: Այս սկզբունքն ամրագրված է Կոնվենցիայի 12-րդ հոդվածում. «Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը

համապատասխան պատշաճ ուշադրություն»: Կոնվենցիայում առանձնահատուկ ընդգծվում է երեխայի ընտանիքի դերի, նրա հեղինակության ու պատասխանատվության կարևորությունը: Հռչակվում է, որ երեխան ունի ոչ միայն ընտանիքի լեզվի ու մշակույթի, այլև այդ լեզվի ու մշակույթի նկատմամբ հարգանքի իրավունք: Կոնվենցիան նաև կոչ է անում պետություններին օժանդակելու այն ընտանիքներին, որոնք չունեն իրենց երեխաների համար կյանքի արժանապատիվ մակարդակ ապահովելու հնարավորություն: Իսկ հիմա նշենք, որ Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 13 հոդվածում նշվում է, որ երեխան իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, այդ իրավունքը ներառում է ցանկացած բնույթի տեղեկատվություն և գաղափարներ որոնելու, ստանալու և հաղորդելու ազատությունը՝ անկախ սահմաններից, գրավոր կամ տպագիր ձևով, ստեղծագործության տեսքով կամ այլ միջոցներով՝ երեխայի ընտրությամբ: Այդ իրավունքի իրագործումը կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, սակայն այդ սահմանափակումները կարող են լինել միայն այնպիսիք, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են. (ա) այլ անձանց իրավունքները և հեղինակությունը հարգելու, կամ (բ) պետական անվտանգությունը կամ հասարակական կարգը, կամ բնակչության առողջությունը, կամ բարոյականությունը պաշտպանելու համար: Շատ կարևոր է երեխաներին իրազեկել Հանրակրթության մասին ՀՀ օրենքով իրեն վերապահված իրավունքներն ու պարտականությունները:

Գլուխ 5-ի Հոդված 20-ում նշվում է սովորողի իրավունքներն ու պարտականությունները՝

Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

Սովորողն իրավունք ունի՝

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը,

ստանալու կրթական վճարովի ծառայություններ.

3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից.

4) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.

5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.

6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

7) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

9) օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3. Սովորողը պարտավոր է՝

1) կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.

3) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.

4) կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Պետք է նաև մանկավարժները իրազեկվեն, որ Հանրակրթության մասին ՀՀ օրենքի Հոդված 27-ում նշվում է մանկավարժների իրավունքներն ու պարտականությունները, որի 2 կետում նշվում է.

Մանկավարժական աշխատողը պարտավոր է՝

1) հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը.

2) նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով

յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները. 1996 թվականին ընդունվեց «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, որը դարձավ Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտանության համակարգի ձևավորման հիմքը: «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 1-ին հոդվածը հստակ ամրագրեց. «Պետությունը ելնում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության և որպես քաղաքացու դաստիարակման առաջնահերթության սկզբունքներից: Երեխան գտնվում է հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո»:

Գլուխ 2. Դպրոցական բուլինգ

Դպրոցական բուլինգ, դպրոցական համատեքստից դուրս բռնություն, վերաբերում է մեկ կամ մի քանի բռնարարների, ովքեր ունեն ավելի մեծ ֆիզիկական ուժ կամ ավելի շատ սոցիալական ազդեցություն, քան իրենց զոհը, և ովքեր բազմիցս ագրեսիվ են վարվում իրենց զոհի նկատմամբ: Բուլինգը կարող է լինել բերանացի կամ ֆիզիկական: Բուլլինգը, իր շարունակական բնույթով, տարբերվում է հասակակիցների կոնֆլիկտի միանվագ տեսակներից: Դպրոցական բուլինգի տարբեր տեսակներ ներառում են շարունակական ֆիզիկական, զգացմունքային կամ բառացի ագրեսիան: Կիբերբուլինգը և սեռական բուլինգը նույնպես բռնության տեսակներ են: Բուլինգը նույնիսկ բարձրագույն կրթության մեջ է: Կան նախազգուշացնող նշաններ, որոնք հուշում են, որ երեխան ենթարկվում է բռնության, երեխան հանդես է գալիս որպես կռվարար, կամ երեխան դպրոցում ականատես է եղել բռնությաբն:

Բռնությունը դպրոցներում էական է շատ երկրներում, սակայն կան կրթական առաջնորդներ, ովքեր հաջողության են հասել դպրոցական բուլինգի նվազեցման հարցում՝ կիրառելով որոշակի ռազմավարություններ: Դպրոցական ահաբեկչությունը նվազեցնելու կամ կանխելու համար օգտագործվող որոշ ռազմավարություններ ներառում են սովորողներին բուլինգի ենթարկելու մասին կրթելը, դասարանում ձայնագրող սարքերի սահմանափակումը, անվտանգության տեխնոլոգիաների կիրառումը և դպրոցում անվտանգության աշխատակիցների առկայությունը: Այն, թե ինչպես են դպրոցները արձագանքում բուլինգին, այնուամենայնիվ, շատ տարբեր է: Դպրոցում բուլինգի ենթարկվածների վրա ազդեցությունները ներառում են դեպրեսիայի, անհանգստության, զայրույթի, սթրեսի, անօգնականության և դպրոցական կատարողականի նվազման: Սամիր Հինդուջայի և Ջասթին Փաթչինի էմպիրիկ հետազոտությունը պարզել է, որ դպրոցական բուլինգի որոշ զոհեր փորձել են ինքնասպան լինել:

Բուլինգ համարվելու համար այս դրվագը պետք է լինի կրկնվող և սովորական: Այն աշակերտները, ովքեր ԼԳԲՏ են, ունեն ցածր կրթական մակարդակ ունեցող ծնողներ, համարվում են սադրիչ, խոցելի են ընկալվում անտիպիկ, կամ կողմնակի մարդիկ են, ավելի մեծ ռիսկի են ենթարկվում բռնարարների կողմից զոհ դառնալու: Բարոնը (1977)

սահմանեց նման «ագրեսիվ վարքագիծը որպես վարք, որն ուղղված է մեկ այլ կենդանի էակին վնասելու կամ վիրավորելու նպատակին, ով դրդված է խուսափել նման վերաբերմունքից»:

Պատմականորեն, Թոմ Բրաունի «Թոմ Բրաունի դպրոցական օրերը» վեպը մանրամասնում է ինտենսիվ դպրոցական բուլինգը, սակայն գիտական ամսագրի առաջին խոշոր հոդվածը, որը վերաբերում է դպրոցական բուլինգին, գրվել է 1897 թվականին: Դպրոցական բուլինգի վերաբերյալ հետազոտությունները ժամանակի ընթացքում կտրուկ աճել են՝ 1900-1990 թվականներին 90 տարում 62 հիշատակումից հասնելով 562-ի՝ 4 տարում (2000-2004 թթ): 2004 թվականից ի վեր դպրոցական բռնության վերաբերյալ հետազոտությունները սնկի պես աճել են: 2022 թվականի «Փառքը» հեռուստասերիալը նոր ուշադրություն է հրավիրել այդ երևույթի վրա:

Չափորոշիչ (Նկար 1)

Սովորական հասակակիցների կոնֆլիկտների, բուլինգի զոհերի և ուսուցիչների համար հետևանքների միջև տարբերությունները:

Բուլինգը ագրեսիվ վարքագծի ենթակատեգորիա է, որը բնութագրվում է թշնամական մտադրությամբ (պատճառված վնասը դիտավորյալ է), ուժերի անհավասարակշռությամբ (իրական կամ ընկալվող ուժի անհավասարություն կռվարարի և զոհի միջև) և որոշակի ժամանակահատվածում կրկնվելով: սովորող-աշակերտ կոնֆլիկտների առավել շարքային տեսակները, որոնք երբեմն մտնում են դպրոցական առօրյա կյանքում, կապված չեն ուժերի անհավասարակշռության հետ: Ի

տարբերություն ավելի սովորական կոնֆլիկտների, դպրոցական բուլինգը կարող է լրջորեն վնասել սովորողներին։

Ուժերի անհավասարակշռություն

Ըստ սահմանման, բուլինգը ներառում է ուժերի անհավասարակշռություն։ Կռվարարն իշխանություն ունի մեկ այլ աշակերտի վրա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են չափը, սեռը, տարիքը, հասակակիցների մեջ դիրքը կամ այլ սովորողների աջակցությունը։ Տղաների շրջանում բուլինգը հակված է ուժի տարբերություններին։ Աղջիկների շրջանում բուլինգն ավելի շատ կենտրոնացած է ֆիզիկական արտաքինի, հուզական կյանքի կամ ակադեմիական կարգավիճակի տարբերությունների վրա։

Որոշ կռվարարներ թիրախավորում են ֆիզիկական արատներ ունեցող հասակակիցներին, ինչպիսիք են խոսքի խանգարումները (օրինակ՝ կակազելը)։ Շատ կակազներ ենթարկվում են հասակակիցների, իսկ երբեմն նաև ուսուցիչների կողմից որոշակի աստիճանի բուլինգի, ոտնձգությունների կամ ծաղրի։

Նախազգուշացնող նշաններ՝

Երեխային բռնության ենթարկելու նշանները կարող են ներառել՝

1. անբացատրելի վնասվածքներ,
2. անհանգստության և հետտրավմատիկ սթրեսի ախտանիշներ,
3. կորած կամ վնասված հագուստ,
4. սննդային վարքագծի փոփոխություն,
5. նվազող գնահատականներ,
6. շարունակական բացակայություններ դպրոցում,
7. ինքնավնասում,
8. ինքնասպանության մտքեր,
9. անընդհատ ներողություն հայցել։
10. Նշանները, որ երեխան բուլինգի է ենթարկում ուրիշներին, կարող են ներառել.
11. ֆիզիկական կամ բանավոր ծեծկռտուքի մեջ մտնելը,
12. Հաճախակի ուղարկել են տնօրենի սենյակ,

13. ունենալ այնպիսի ընկեր, ով բուլինգի է ենթարկում և լինել խնդրահարույց,
14. Սովորական գործունեության մեջ գնալով ավելի ագրեսիվ դառնալ։

Նշանները, որ երեխան ականատես է եղել բուլինգի, ներառում են՝

1. դպրոցական վատ վարքագիծ,
2. էմոցիոնալ խանգարում,
3. դեպրեսիա
4. հետտրավմատիկ սթրեսային խանգարում,
5. թմրամիջոցների և ալկոհոլի չարաշահումը,
6. ինքնասպանության մտքեր։

Բուլինգի վերահսկում

Բուլինգը վերահսկելու համար օգտագործվում են երկու հիմնական մեթոդ՝ **կանխարգելում** (գործել նախքան ինչ-որ բան տեղի ունենալը) կամ **հակազդեցություն** (գործել, երբ ինչ-որ բան տեղի է ունենում կամ հենց նոր է տեղի ունեցել)։

Կանխարգելիչ լուծումները կարող են ներառել՝

Կրթություն. Սովորողների, ծնողների և ուսուցիչների կրթությունն այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում բուլինգը, կարող է օգնել մարդկանց հասկանալ բռնության վնասակար էությունը։ Ուսուցիչներին, դպրոցական ավտոբուսների վարորդներին և դպրոցի այլ մասնագետներին սովորեցնում են, թե ինչպես և երբ միջամտել։ Դասընթացների օրինակները, որոնք օգտագործվում են սովորողներին բուլինգի մասին ուսուցանելու համար ներառում են՝ ներկայացումներ, դերախաղ, քննարկումներ բուլինգի բացահայտման և զեկուցման վերաբերյալ, ականատեսներին սովորեցնելով, թե ինչպե՞ս և ե՞րբ օգնել, արվեստի և արհեստի օգտագործումը բուլինգի հետևանքների մասին ըմբռնման համար, և դասարանային հանդիպումներ, խոսելու հասակակիցների հարաբերությունների մասին։ Համակարգված վերանայումը ցույց է տվել, որ բուլինգը ցուցիչ է հետագայում հանցավոր վարքագծի համար՝ անկախ մանկության այլ հիմնական ռիսկային գործոններից, ինչը ենթադրում է, որ հակաահաբեկչական ծրագրերը կարող են դիտվել որպես հանցագործության վաղ կանխարգելման ձև։

Սահմանափակումներ ձայնագրող սարքերի վրա. Ենթադրվում է, որ բջջային հեռախոսների օգտագործումը կարող է հանգեցնել կիբերհարձակման դեպքերի աճի, ինչի պատճառով որոշ դպրոցներ արգելել են դրանք ամբողջ ուսումնական օրվա ընթացքում:

Անվտանգության տեխնոլոգիաներ. Դպրոցները կարող են տեսախցիկներ տեղադրել՝ վարքը վերահսկելու համար: Այնուամենայնիվ, թերահավատները պնդում են, որ տեսախցիկները կարող են ներխուժել սովորողների գաղտնի տարածք, հատկապես, երբ ձայնագրությունների երկարակեցության և հասանելիության վատ սահմանափակումները հանգեցնում են դրանց չարաշահման:

Պահակները դպրոցում. Դպրոցները կարող են ընտրել անվտանգության աշխատակիցներ կամ պահակներ՝ աշակերտների անվտանգությունն ապահովելու համար: Փորձագետները կարծում են, որ դպրոցներում անվտանգության աշխատակիցների առկայությունը կարող է նվազեցնել բուլինգի դեպքերը, քանի որ պահակները ծանոթանում են սովորողների հետ, և նրանք կարող են կանխատեսել և կանխել խնդիրները, նախքան դրանց առաջանալը:

Բուլինգի դեպքերի վերաբերյալ առաջարկվող հակազդեցությունները բազմազան են, և կարող են պահանջվել տարբեր մեթոդներ՝ կախված բուլինգի տեսակից և ներգրավված մարդկանցից: Համապատասխան արձագանքման որոշ առաջարկություններ են՝

Խուսափեք կոպիտ առերեսումներից. Խորհուրդ է տրվում, որ կռվարարներին չհանդիպի ֆիզիկական բռնություն, որպեսզի խուսափեն հասարակության մեջ դաժան միջավայրի ձևավորմանը նպաստելուց:

Վկաների զեկույցները. Վկաները, անկախ նրանից, թե տուժողին հայտնի են, թե ոչ, տեղեկատվության կարևոր աղբյուր են բռնության դեպքում: Հնարավորության դեպքում խորհուրդ է տրվում պահպանել անանունությունը:

Միջամտություն ականատեսի կողմից. Առաջարկվում է, որ ականատեսները և այլ երրորդ անձինք խուսափեն կոնֆլիկտային իրավիճակում միջամտելուց՝ իրավիճակը ավելի չսրելու համար:

Ծնողների արձագանքը: Մասնագետները խորհուրդ են տալիս, որ ներգրավված ծնողները խուսափեն միմյանց հետ անմիջականորեն խոսելուց: Փոխարենը խորհուրդ է տրվում կապ հաստատել դպրոցի հետ և թույլ տալ դպրոցի համապատասխան անձնակազմին քայլեր ձեռնարկել, պատասխանատվություն ստանձնել և հանդես գալ որպես միջնորդ:

Ուսուցչի պատասխանը: Ուսուցչի միջամտությունները կարևոր են համարվում բազմաթիվ հակաբուլինգային ծրագրերում: Շատ երկրներում ուսուցիչները իրավական պարտավորություն ունեն կանխելու իրենց աշակերտներին վնասումը: Ուսուցիչները կարող են միջամտել՝ օգտագործելով հեղինակության վրա հիմնված միջամտություններ, բռնաբարության նկատմամբ ոչ պատժիչ մոտեցումներ կիրառելով, զոհերին աջակցելով և այլ ուսուցիչների կամ մասնագետների ներգրավմամբ: Պարզվել է, որ ուսուցչի որոշ այլ միջամտություններ օգտակար են ահաբեկումը նվազեցնելու համար: Այս միջամտությունները ներառում են սահմանների հստակ մատնանշում, պարզ դարձնելով, որ դրսևորվող վարքագիծը ընդունելի չէ: Դպրոցական բուլինգի և դրա հետ կապված բացասական հետևանքների քննարկումը ամբողջ դասարանի հետ նույնպես օգտակար է եղել բուլինգը նվազեցնելու համար:

Կասեցում և հեռացում: Եթե բուլինգի համար որևէ այլ լուծում չի գործում, կամ այն դեպքերում, երբ բռնությունը շատ դաժան է, հնարավոր է, որ անհրաժեշտ լինի կասեցնել կամ հեռացնել հանցագործին: Խիստ միջոցները, ինչպիսիք են կալանավորումը, հեռացումն ու կասեցումը, կարող են, այնուամենայնիվ, ունենալ իատրոգեն ազդեցություն և մեծացնել ագրեսիան:

Տեղափոխում: Այն դեպքերում, որոնք ավելի դժվար է լուծել, տուժողը կարող է մտածել հաստատության փոփոխության կամ նույնիսկ իր ընտանիքի հետ մեկ այլ վայր տեղափոխվելու մասին:

Հոգեսոցիալական աջակցություն: Բուլինգի ենթարկվելուց հետո զոհերը կարող են աջակցություն խնդրել, օրինակ՝ նոր ընկերներ ձեռք բերելու կամ նոր գործունեություն ծավալելու հարցում:

Բուլինգի տեսակները

Կան մի շարք ձևեր, որոնցով տեղի է ունենում դպրոցական բուլինգը։ Դրանք ներառում են բանավոր, ֆիզիկական, հոգեբանական, կիբեր և սեռական բուլինգ։ Ուղղակի բուլինգը վերաբերում է զոհի վրա բացահայտ ֆիզիկական կամ բանավոր հարձակմանը։ Անուղղակի բուլինգը ավելի աննկատ է և դժվար է հայտնաբերել, բայց ներառում է հարաբերական ագրեսիայի մեկ կամ մի քանի ձևեր, ներառյալ սոցիալական մեկուսացումը դիտավորյալ մերժման միջոցով, թիրախի բնավորությունը կամ հեղինակությունը արատավորելու համար լուրեր տարածելը, թիրախի հետևում դեմքեր կամ անպարկեշտ ժեստեր անելը և ընկերների շահարկումը։ Ապացույցներ կան, որ բուլինգն ավելի հաճախ եղել է ավագ դպրոցներում, քան ցածր դասարաններում և տևում է ավելի երկար, քան անհատների կողմից իրականացվող ահաբեկումը։

Ֆիզիկական

Ֆիզիկական բուլինգը կռվարարի և զոհի միջև ցանկացած անցանկալի ֆիզիկական շփումն է։ Սա ահաբեկման ամենահեշտ ճանաչելի ձևերից մեկն է։ Օրինակներ՝ կռիվ, մռայլություն, անպատշաճ դիպչում, ոտքերով հարվածներ, կսմթել, մազ քաշել, բռունցքներով հարվածել, հրել, ապտակել, թքել, հետապնդել կամ տուժողի հետ անցանկալի և մշտական աչքով կապ հաստատել, զոհի վրա հեղուկներ թափել, փոքրիկ առարկաներ նետել զոհի վրա, ծաղրել, սպառնալ, ծակծկել, օգտագործել զենք, ներառյալ ինքնաշեն զենքեր, գողություն կամ անձնական իրեր վնասել։

Զգացմունքային

Զգացմունքային բռնությունը բուլինգի ցանկացած ձև է, որը վնաս է հասցնում զոհի հոգեկանին կամ հուզական բարեկեցությանը։ Օրինակներ՝ մարդկանց մասին չարամիտ լուրերի տարածումը, ուրիշների հետ «խմբավորումը» (սա կարող է համարվել նաև ֆիզիկական բուլինգ), մարդկանց անտեսելը (օրինակ՝ լուռ վերաբերմունքը կամ զոհի գոյության անտեսումը), ուրիշներին սադրելը, նսեմացնելը կամ վիրավորական բաներ ասելը (որոնք նաև բանավոր ահաբեկման ձևեր են)։

Բանավոր

Բանավոր բուլինգը զրպարտիչ հայտարարությունները կամ մեղադրանքներն են, որոնք զոհին անհարկի հուզական անհանգստություն են պատճառում: Օրինակներ՝ վիրավորական արտահայտություններ կամ (հայհոյանք) ուղղված տուժողի հասցեին՝ օգտագործելով նվաստացուցիչ արտահայտություններ կամ ծաղրել անձի անունը, բացասաբար մեկնաբանել ինչ-որ մեկի արտաքինը, հագուստը, մարմինը և այլն, տանջելը, անհանգստացնելը, նսեմացնելը, անպատշաճ սեռական մեկնաբանություններ անելը:

Կիբերհարձակում

Համակարգիչների և ինտերնետի օգտագործման աճմանը զուգընթաց նման տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի օգտագործումը դպրոցի բակից բուլինգը տեղափոխվել է որոշ չափով դեպի համացանց:

Ըստ «Ստոպ Կիբերբուլինգ»կայքի՝ դպրոցները դժվարություններ են ունենում վերահսկելու համալսարանից դուրս բուլինգը՝ այն ընկալման պատճառով, որ իրենց դերը կանգ է առնում դպրոցի բակի դարպասների մոտ: Դպրոցները ճնշումների են ենթարկվում՝ չգերազանցելու համար իրենց լիազորությունները և խուսափելու սովորողների ազատ խոսքի իրավունքը ոտնահարելուց:

Առաջարկություններ են արվել, որ տնօրենները ներառեն կիբերհարձակումը իրենց էթիկայի կանոնագրքում՝ թույլատրելով կարգապահական բուլինգը դպրոցական հաստատություններից դուրս և, ըստ պրոֆեսոր Բեռնարդ Ջեյմսի «զարգացող տեխնոլոգիաների այս համատեքստում մանկավարժների վախկոտությունն աշխատում է ի օգուտ կռվարարների»: Մանկավարժները, ըստ երևույթին, աջակցություն ունեն սովորողների կողմից: Օրինակ՝ Նյու Յորք նահանգի Մելվիլ քաղաքից երեք ավագ դպրոցի աշակերտներ կազմակերպեցին ահաբեկչության մասին իրազեկման քայլարշավ, որտեղ մի քանի հարյուր մարդ դուրս եկավ՝ ցույց տալու իրենց աջակցությունը:

Հետազոտող Չարիս Նիքսոնը պարզել է, որ սովորողները կիբերհարձակման ժամանակ օգնության չեն հասնում չորս հիմնական պատճառով՝

- նրանք իրենց շրջապատի մեծերի հետ կապվածություն չեն զգում,

- սովորողները չեն ընկալում կիբերհարձակումը որպես խնդիր, որն արժե առաջ քաշել,
- նրանք չեն զգում, որ շրջապատող մեծահասակները կարող ճիշտ վարվել կիբերհարձակման հետ
- դեռահասների մոտ ավելացել են ամոթի և նվաստացման զգացումները՝ կապված կիբերհարձակման հետ։

Հետազոտությունները ցույց են տալիս, որ կիբերհարձակումը երբեմն արդեն տեղի ունեցող բուլինգի ընդլայնումն է։ Կիբերհարձակման ենթարկված աշակերտները շատ դեպքերում նախկինում նույնպես ենթարկվել են բռնության այլ ձևերով (օրինակ՝ ֆիզիկապես կամ բանավոր՝ դպրոցում)։ Քիչ սովորողներ կան, ովքեր ենթարկվում են բռնության բացառապես ինտերնետի միջոցով։ Որոշ կիբեր զոհեր ֆիզիկապես ավելի ուժեղ են, քան կիբեր կռվարարները, ինչը հանգեցնում է նրան, որ այս կռվարարները նախընտրում են առցանց առճակատումները, քան դեմ առ դեմ շփումը[57]։

Սեռական

Սեռական բուլինգը «ցանկացած ահաբեկչական վարքագիծ է, լինի դա ֆիզիկական կամ ոչ ֆիզիկական, որը հիմնված է անձի սեռականության կամ սեռի վրա»։ BBC Panorama-ի հարցաշարը, որը նախատեսված էր 11-ից 19 տարեկան անգլիացի դեռահասների համար, պարզել է, որ 273 հարցվածներից 28-ին ստիպել են սեռական ինչ-որ բան անել, 31-ը տեսել է, որ դա տեղի է ունենում մեկ ուրիշի հետ, իսկ 40-ը՝ անցանկալի հպվել։ Միացյալ Թագավորության կառավարության տվյալները ցույց են տալիս, որ 2007-2008 ուսումնական տարում Անգլիայում եղել է 3450 ֆիքսված ժամկետով բացառություն և 120 հեռացում դպրոցներից սեռական ոտնձգությունների պատճառով։ Սա ներառում էր այնպիսի միջադեպեր, ինչպիսիք են շոշափելը և սեռական վիրավորական արտահայտություններ օգտագործելը։ 2008 թվականի ապրիլից մինչև 2009 թվականի մարտը ChildLine-ը խորհրդատվություն է տվել ընդհանուր առմամբ 156 729 երեխաների, որոնցից 26 134-ը խոսել են բուլինգի մասին՝ որպես հիմնական մտահոգություն, իսկ 300-ը՝ մասնավորապես սեռական բուլինգի մասին։ Սեքստինգի դեպքերը նույնպես աճում են և դարձել են բուլինգի հիմնական աղբյուրը, և ներգրավված անձանց բացահայտ լուսանկարների տարածումը, դպրոցում

կամ ինտերնետում, հարուցողներին դրդում է արհամարհանքի և բռնության ենթարկվելու իրավիճակում։

Բուլինգի կանխարգելումը

Այս խնդրի լուծումն ու կանխարգելումը պետք է լինեն երեխա, ծնող և ուսուցիչ ակտիվ համագործակցության ու, միևնույն ժամանակ, նրանց հանդեպ անհատական մոտեցման շնորհիվ։

Բուլինգի կանխարգելման հարցում ուսուցիչներն ունեն իրենց մեծ ազդեցությունը։ Ամեն ինչ պետք է սկսել կանխարգելումից.

- Դպրոցում կարող եք կազմակերպել բաց դասեր, իրազեկիչ հանդիպումներ, որոնց ընթացքում աշակերտները մանրամասն կծանոթանան երևույթին։
- Դասղեկի ժամերին կարող եք պարբերաբար անդրադառնալ խնդրին, քննարկել երևույթը, խոսել դրա վատ ազդեցությունների մասին։
- Աշակերտներին ներկայացրե՛ք իրենց իրավունքները, միասին կարդացե՛ք այն օրենքները, որոնցով պաշտպանվում են այդ իրավունքները։
- Երբ բուլինգ եք նկատում Ձեր աշակերտների մոտ, լսե՛ք երկու կողմին էլ, առանց նվաստացումների բուլերին բացատրե՛ք, որ բուլինգը վատ երևույթ է։
- Երբեք մի՛ խրախուսեք բուլերների կատարած վատ արարքները։ Թե՛ բուլերի, թե՛ զոհի ծնողներին զգուշացրե՛ք հարաբերությունների և գործողությունների ընթացքի մասին՝ նրանց հետ լինելով ակտիվ համագործակցության մեջ։

Բուլինգի կանխարգելման հարցում անհամեմատելի է ծնողի դերը.

- Մի՛շտ պատրաստ եղեք Ձեր երեխայի հետ երկխոսության, քննարկեք թե՛ լավ, թե՛ վատ արարքները։
- Դարձե՛ք ձեր երեխայի համար վստահելի, լավ ընկեր, խրախուսե՛ք այն ժամանակ, երբ պատմում է իր խնդիրների մասին, սովորեցրե՛ք խնդիրներն ինքնուրույն լուծել, բայց նաև ցո՛ւյց տվեք Ձեր աջակցությունը և մի՛շտ հիշեցրեք, որ նրա կողքին եք։
- Ճանաչե՛ք Ձեր երեխայի ընկերներին, հասկացե՛ք, թե ում հետ է անցկացնում իր ժամանակը։

- Օգնե՛ք Ձեր երեխային հասկանալ, թե ինչ է բուլինգը, և ինչպես կարելի է կանխել այն։ Նրան բացատրե՛ք, որ բուլինգը լավ երևույթ չէ և կարող է վատ ազդեցություն ունենալ ինչ-որ մեկի համար։
- Ձեր երեխային սովորեցրե՛ք կարեկից լինել և, իհարկե, կարեկցե՛ք նրան։
- Երբ Ձեր երեխան ենթարկվել է բուլինգի, առաջին հերթին ուսումնասիրե՛ք իրավիճակը համակողմանի։ Ժամանա՛կ տրամադրեք, որպեսզի հասկանաք՝ իրականում ինչ է պատահել, ովքեր են ներգրավված եղել, ինչպես է ամեն ինչ սկսվել։
- Կա՛պ պահպանեք ներգրավված բոլոր երեխաների ծնողների հետ՝ նրանց զգուշացնելով իրենց երեխայի վարքի մասին։
- Համագործակցե՛ք Ձեր դպրոցի հետ. քննարկե՛ք յուրաքանչյուր հանգամանք, աջակցե՛ք Ձեր երեխային՝ պահանջելով, որ բուլերը կրի պատասխանատվություն իր կատարածի համար, քանի որ երբ նա իր արարքին համապատասխան պատասխանատվությունը չի կրում, անպատժելիության մթնոլորտում նման դեպքերի հաճախականությունը մեծանում է։
- Մշտապես կա՛պ պահպանեք դպրոցի հոգեբանի հետ, հանդիպե՛ք և նրա հետ քննարկե՛ք Ձեր երեխայի պահվածքը։ Երեխայի և հոգեբանի համատեղ աշխատանքը ևս կարող է օգնել այս հարցում։
- Վստա՛հ եղեք, որ Ձեր երեխան ապահով միջավայրում է և իրեն թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես լավ է զգում ։
- Եվ վերջապես, եղե՛ք լավ օրինակ Ձեր երեխայի համար։

Գլուխ 3. Ուսուցչի դերը սովորողի իրավունքների ու ազատությունների պատվի ու արժանապատվության պաշտպանության գործում

Մի կողմից, պետք է մնացած երեխաների հետ աշխատանք տանել, բերել նրանց գիտակցության, որ իրենց արածը վատ բան է: Նրանք դա սովորաբար չեն գիտակցում, քանի որ ունեն արդարության սեփական ընկալում, և եթե ամեն մեկին առանձին հարցնես, նրանք հեշտությամբ կարդարացնեն կատարվելիքը: Ամենասուր դեպքերում խմբում կա կազմակերպիչ՝ խնդրահարույց, լուրջ բարդույթներ ունեցող երեխա, որն ունի առաջնորդին բնորոշ հատկանիշներ և օգտագործում է դրանք այլոց հաշվին ինքնահաստատման համար: Այդ երեխային պետք է առանձնացնել խմբից և նրա հետ ակտիվորեն աշխատել՝ դարձյալ բերելով գիտակցության, որ իր արածը անընդունելի է և կարող է իր համար ունենալ հետևանքներ: Նրա համար հիմնական վտանգը խմբի աչքերում հեղինակության կորուստն է: Երբ նա տեսնի, որ մեծահասակները (մանկավարժները, ծնողները) ակտիվորեն միջամտում են, և դրա շնորհիվ իր հեղինակությունը սկսում է սասանվել, նա կսկսի համագործակցել: Այստեղ արդեն գալիս ենք այս և բազմաթիվ այլ խնդիրների լուծման հիմնական միջոցին՝ ծնողները պետք է համախմբվեն, մի կողմ դնեն «իմ երեխան», «քո երեխան» հասկացությունները, և համագործակցեն ուսուցիչների հետ՝ դիտելով այս խնդիրը որպես ընդհանուր, այլ ոչ թե միայն մեկ երեխայի խնդիր:

Ինչպես աշխատել հալածանքների թիրախ դարձած երեխայի հետ

Ինչ վերաբերում է հալածանքների թիրախ դարձած երեխային, ապա մանկավարժների և բոլոր ծնողների հիմնական նպատակը պետք է լինի աջակցել այդ երեխային, որպեսզի նա կարողանա հաղթահարել հաղորդակցվելու խնդիրները, գնալով հարթի բոլոր իր դասարանակիցների հետ հարաբերությունները և կայուն, մտերիմ ընկերներ ձեռք բերի: Մի քանի լավ ընկերներ ունեցող երեխան արդեն շատ ավելի քիչ է հայտնվում հալածանքի թիրախի դերում: Այստեղ շատ օգտակար է հոգեբանի աջակցությունը, ավելին, սովորաբար այն որոշիչ է: Մեր երկրում հոգեբաններին դիմելու հետ կապված պատնեշը դեռ տարածված երևույթ է, ինչը ապշեցուցիչ է, հաշվի առնելով այդ ոլորտի կարևորությունը մարդկանց կյանքում: Չնայած՝ ինչո՞ւ ենք զարմանում: Մարմնական առողջությունն էլ մեզ մոտ

առաջնահերթություն չէ, և շատ մարդիկ գալիս են բժշկի մոտ միայն դրդված՝ անտանելի ցավով կամ մահվան վտանգով։

Այս ամենի հետ մեկտեղ պետք է գիտակցել, որ մի խնդիր լուծելով՝ կարևոր է նոր խնդիրներ չստեղծել։ Մանկավարժությունը ունի մի շատ կարևոր սկզբունք՝ երեխան սովորում է, երբ դժվարություններ է հաղթահարում, և ավելորդ աջակցությունը վնասակար է երեխայի զարգացման համար։ Ե՛ւ մանկավարժները, ե՛ւ ծնողները պետք է դա քաջ գիտակցեն, և միջամտեն միայն այն պահերին, երբ բացահայտ է, որ առանց իրենց աջակցության խնդիրը չի լուծվում։ Իսկ միջամտելիս դարձյալ վստահեն երեխաներին, և հնարավորություն տան նրանց մտածել, գործել և լուծել խնդիրները ինքնուրույն։ Դա այս և բազմաթիվ այլ նման խնդիրների կայուն հաջողության հիմնական գրավականն է։ Երեխաների տեսակետը պետք է հավասարապես կարևորվի, նրանք պետք է քննարկեն և որոշեն, թե ինչ են անում և ինչպես։ Մեծահասակների դերը պետք է լինի աջակցելու, ուղղորդելու և հետևելու մեջ, այլ ոչ թե միջամտելու և երեխաների միջև կամ երեխաների փոխարեն հարցերը լուծելու։ Անընդունելի է, երբ ծնողները դառնում են երեխաների ընդհարման մասնակիցներ, սպառնում են երեխաներին, այլ ծնողներին կամ մանկավարժներին։ Դա միայն խորացնում է խնդիրը և շատ վատ օրինակ է ծառայում երեխաների համար։

Եթե հալածանքի հետ աշխատանք տարվի դպրոցներում, այն չի դառնա խնդիր բանակում.

Խմբային հալածանքը, այսպիսով, բնական երևույթ է, այն բխում է երեխաների տարիքին բնորոշ վարքագծից, և որևէ դպրոց չի կարող դրանից խուսափել։ Սակայն դա չի նշանակում, որ մենք պետք է հանդուրժենք այն, արդարացնենք երեխաներին և չգործենք՝ առաջնորդվելով այն սկզբունքով, որ այն ինչ բնական է, ճիշտ է։ Մշակույթը, որը մարդկության անբաժանելի մասն է, և որի զարգացման և սերնդից սերունդ փոխանցման մեջ դպրոցը ունի ամենամեծ դերը, հենց նրա համար է, որ սահմանափակի մարդու բնական դրսևորումները՝ դարձնելով նրան առողջ և արդյունավետ հանրության լիարժեք և երջանիկ անդամ։

Խմբային հալածանքի ամեն դեպք շատ լավ միջոց է դպրոցի և ծնողների համար ձևավորելու երեխաների մոտ կայուն մշակույթ՝ հիմնված մարդու

արժանապատվության նկատմամբ հարգանքի, սիրո, հոգածության, արդար հանդուրժողականության և այլ բազմաթիվ կարևորագույն արժեքների վրա։ Այն պետք է դառնա երեխաների հետ երկարաժամկետ աշխատանքի մեկնարկ, որի նպատակը պետք է լինի ոչ թե արգելելը, այլ երեխաների գիտակցությունը զարգացնելը, նրանց հարաբերությունները կայունացնելը և ներդաշնակեցնելը, նրանց կողմից փորձը գիտակցելը և հետևություններ անելը։

Եթե հալածանքի հետ նման աշխատանք տարվի դպրոցներում, ապա այն չի մեծանա երեխաների հետ՝ դառնալով խնդիր բանակում, մտնելով կազմակերպությունների մշակույթ, մեր քաղաքական և հասարակական կյանք, թունավորելով մեր միջավայրը և ապագան։

Գլուխ 4. Վիճակագրություն

Նյու Յորք, 19-ը սեպտեմբերի, 2018թ. — Համաձայն ՅՈՒՆԻՍԵՖ-ի նոր զեկույցի՝ աշխարհում 13–15 տարեկան աշակերտների կեսը՝ 150 մլն երեխա, ասել է, որ դպրոցում կամ դպրոցի տարածքում հասակակիցների կողմից բռնության է ենթարկվել:

Իրավիճակը Հայաստանում

Հայաստանում երեխաների 38 %-ը տեսել է՝ ինչպես են համայնքում երեխայի ծեծում, իսկ 35 %-ը նվազագույնը 1–5 անգամ դպրոցում ծաղրանքի բուլինգի) ականատես է եղել:

Երեխաների 35%-ը դպրոցներում տեսել է բռնության դեպքեր այս կամ անցած տարվա ընթացքում առնվազն 1–5 անգամ: Սա նշանակում է, որ գրեթե յուրաքանչյուր երկրորդ երեխան դպրոցում ականատես է եղել բռնության: Ավելին, հարցվածների 38%-ը պատասխանել է, որ այս կամ նախորդ տարի իրենց դպրոցում կամ համայնքում տեսել է ինչ-որ մեկին հարվածելիս:

Մեկ այլ անհանգստացնող տվյալ առնչվում է անչափահասների և մեծահասակների միջև առցանց հաղորդակցությանը՝ հարցվածների 13%-ը փաստել են, որ նրանց հետ մեծահասակն առցանց հաղորդակցվել է և ցանկացել է խոսել անձնական թեմաների մասին: Հարցվածների մոտ 11%-ը նշել են, որ այլ երեխաներից կամ մեծահասակներից առցանց կամ բջջային հեռախոսով ստացել են վիրավորական հաղորդագրություններ:

Ի դեպ, երեխաների 84%-ը մեծ կարևորություն է տալիս այն փաստին, որ Հայաստանում պետք է ավելի շատ աշխատանքներ իրականացնել բռնության դեպքերը կանխելու ուղղությամբ:

Տվյալները «Երեխաների կարծիքով…» 2017 հետազոտությունից են, որին մասնակցել են 12, 14 և 16 տարեկան երեխաներ:

Եզրակացություն

Այսպիսով, մանրամասնորեն ուսումնասիրելով սովորողի իրավունքների և ազատությունների , պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում թեման և գործնականում կիրառելով այն, եկանք այն եզրակացությանը, որ սկսած 1-ին դասարանից առարկայի դասավանդման ընթացքում պարտադիր է սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը : Արդյունավետ ուսուցումն առանց սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանության, ինչպես նաև պարտականությունների կատարման անհնար է: Բոլոր աշակերտները՝ անկախ մտավոր, ֆիզիկական, հոգեկան առանձնահատկություններից պետք է կարողանա <<օգտագործել>> իր իրավունքներն ու ազատությունները և մշտապես հիշի. << Իմ իրավունքներն ավարտվում են այնտեղ, որտեղ սկսվում են դիմացինի իրավունքները>> : Օրենքները չիմանալը չի ազատում պատասխանատվությունից, ուստի անհրաժեշտ է աշակերտներին դեռ մանկուց իրազեկել հասարակական կարգ ու կանոնի, օրենքի, իրավունքի ու պարտականության, հավասարության և արդարության կարևորության մասին: Լինելով արժանապատիվ սովորող՝ նա կարող է ուսուցման մեջ ապահովել հաջողություններ: Դասապրոցեսում պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ սովորողը հաճույքով հաճախի դպրոց և, որ ամենակարևորն է, զգա, որ իր իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը պաշտպանված է: Այդժամ նա լիարժեք կկատարի իր պարտականությունները: Բնականաբար այդ ամենին հետևողն ու հիմնական նպաստողը ուսուցիչն է: Այսպիսի դասընթացները պահանջում են ավելի մեծ պատրաստվածություն: Այսինքն՝ բավարար չէ միայն բովանդակության մատչելի ներկայացումը, անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի մեթոդներ, որոնց շնորհիվ սովորողը կդառնա դասապրոցեսի անմիջական մասնակիցը: 23 Դասավանդման ընթացքում կիրառելով զրույցի, քննարկման, դիտարկման և համեմատման մեթոդները՝ հանգեցինք նրան, որ սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը հնարավոր է և պետք է իրականացնել առարկայի դասավանդման ընթացքում՝ սկսած 1-ին դասարանից: Դասավանդման ընթացքում նյութի մատուցումը պետք է լինի ճկուն, հետաքրքիր և հետապնդի սովորողների իրավունքների ու

ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությանը: Այս ամենի ճիշտ կիրառումը հնարավորություն է տալիս սովորողին հասնել որոշակի հաջողության և, որ կարևորն է, կարողանա հաղթահարել դժվարություններն ու խոչընդոտները: Ուսուցիչը պետք է անընդհատ դրական հուզական մթնոլորտ ստեղծի դասաժամին, իսկ դրա համար անհրաժեշտ է ամրապնդել սովորողի վստահությունը իր անձի նկատմամբ: Այս ամենին հնարավոր է հասնել ուսուցչի և սովորողի համագործակցության և փոխադարձ հարգանքի շնորհիվ: Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ դասավանդման գործընթացի նպատակային կազմակերպումը հանգեցնում է սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանության բարձրացմանը:

Գրականության ցանկ

1. https://infocom.am/hy/article/60968
2. https://www.unicef.org/armenia
3. https://www.civilnet.am/news
4. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A2%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%B6%D5%A3
5. https://www.swv.am/index.php/hy/our-pillars-am/rapid-response-unit-am/1213-2018-12-05-12-55-30
6. https://hmk.am/wp-content/uploads/2021/10/Bullying_rep.pdf